

ԳՐԻԳՈՐ ՂԱՓԱՆՑՅԱՆԸ ՀԱՏԿԱՆԱՎԱՆԳԵՏ

ՆԱՐԻՆԵ ԴԻԼԲԱՐՅԱՆ

Գրիգոր Ղափանցյանը XX դարի առաջին կեսի հայ լեզվաբանության խոշորագույն գործիչներից է, որի տեսակետներն ու պնդումները գիտական լայն շրջանառության մեջ են մինչ այսօր թե՛ մեր, թե՛ արտերկրի հայազետ լեզվաբանների ու պատմաբանների աշխատություններում: Նա գիտական հետաքրքրությունների լայն շրջանակ ուներ և, ըստ էության, անցյալ դարի այն հսկաների թվին է պատկանում, որոնք միավորում էին բանասիրությունը և պատմագիտությունը, իսկ լեզվաբանությունն ըմբռնում էին իբրև մի համապարփակ համակարգ՝ սկսյալ ընդհանուր և համեմատական լեզվաբանությունից մինչև լեզուների պատմություն, հատկանվանագիտություն՝ իր տարբեր բաժիններով:

Հայերենի ցեղակցության բնույթի վերաբերյալ իր հիմնարար աշխատանքներում Գ. Ղափանցյանը մշտապես անդրադարձել է հատուկ անունների՝ տեղանունների, դիցանունների, ցեղանունների, մասամբ նաև անձնանունների լեզվական վերլուծությանը՝ դրանք համարելով ազգերի և նրանց լեզուների վաղնջական պատմության անգնահատելի վկայագրեր: Նշանավոր հայազետը մինչև վերջ չընդունեց հայերենի ծագման գուտ հնդեվրոպական տեսությունը՝ հետևողականորեն պաշտպանելով իր տեսակետը հայոց լեզվի բնույթի վերաբերյալ: Իր վերջին գիտական մենագրության («Հայոց լեզվի պատմություն. Հին շրջան»¹) ներածականում Գ. Ղափանցյանը գրում է. «Հայերենն ունի ուժեղ չափով շեշտված հնդեվրոպական նկարագիր, որը նստել է տեղական փոքրասիական (ասիանիկ) լեզուների վրա, այդպիսով կազմելով մի յուրատեսակ խաչավորված նոր լեզու»²:

Հայերենի բառապաշարում գիտնականը փնտրում և վերականգնում էր կովկասյան՝ լազո-մեգրելական, սեմական՝ բաբելոնական, այնպիսի արմատներ, որոնք փոխառություն չէին: Արդի լեզվաբանական ըմբռնմամբ՝ դրանք կազմում են մեր լեզվի ենթաշերտը, այսինքն՝ հայերենի մեջ ձուլված լեզուների հետքերն են: Հայերենի բնույթի հենց այս ըմբռնումից էլ բխում էր հատուկ անունների հանդեպ Գ. Ղափանցյանի ընդգծված հետաքրքրությունը, գիտնականն առանձին աշխատություններ է նվիրել հատկապես տեղանվանագիտությանը. 1940 թ. նա ռուսե-

¹ Գ. Ղափանցյանը վախճանվեց 1957 թ., իսկ «Հայոց լեզվի պատմություն. Հին շրջան» աշխատանքը տպագրվեց հետմահու. 1961 թ.:

² Գ. Ա. Ղափանցյան, Հայոց լեզվի պատմություն. Հին շրջան, Եր., 1961, էջ 11:

րեն լույս է ընծայում տեղանվանագիտական իր կարևորագույն հետազոտություններից մեկը, իսկ 1948 թ. վերջինիս տրամաբանական շարունակությունը համարվող հաջորդ աշխատանքը³, որտեղ հայկական հասկանվանական նյութը զուգադրվում էր փոքրասիական լեզվական հարուստ փաստերի հետ, սահմանվում էին դրանց հնչյունական, իմաստաբանական, բառակազմական և անգամ ձևաբանական ընդհանրությունները: Ավելի ուշ՝ 1956, ապա 1975 թթ. տպագրվում են «Историко-лингвистические работы» ժողովածուի երկու հատորները, որում ի մի են բերվում գիտնականի տարբեր տարիներին գրված բազմաթիվ ուսումնասիրությունները հնագույն դիցանունների, ցեղանունների վերաբերյալ: 2008 թ. ԵՊՀ հրատարակչությունը լույս ընծայեց Գրիգոր Ղափանցյանի «Անտիպ գործեր» խորհրդանշական վերնագրով գիրքը, որտեղ ամփոփվեցին Հր. Աճառյանի «Արմատական բառարանի առթիվ դիտողությունները» և հայոց հին դիցարանին, մեր հին աստվածների նախատիպերին և նրանց փոխարիելու եկած քրիստոնեական սրբերին վերաբերող «Ара Прекрасный. Мифотворческий образ у армян» բանասիրական-լեզվաբանական ուշագրավ աշխատանքը, որտեղ տարբեր դիցանուններ են քննված իրենց հնչյունական և իմաստային զուգաբանություններով:

Ղափանցյան-հատկանվանագետն իր հետազոտություններում մշտապես զուգակցում էր քննության տարածամանակյա և համաժամանակյա մեթոդները, որոնց միջոցով հնարավոր էր դառնում բնութագրվող միավորները նկարագրել իրենց պատմական զարգացման ընթացքում: Միաժամանակ կիրառում էր համեմատության և վերականգնման մեթոդները՝ բացահայտելով հայկական տեղանունների, դիցանունների և ցեղանունների կազմության առաջնային կաղապարները, այսինքն՝ առանձնացվում էին այն հիմնական իմաստային դաշտերի արմատները, որոնք տեղանուն կամ ցեղանուն էին դառնում, ապա տարանջատվում էին այն ածանցները կամ ածանցակերպ մասնիկները, որոնք հասարակ անուններին տեղանվան կամ ցեղանվան իմաստ էին հաղորդում: Հետևաբար Գ. Ղափանցյանին իրավամբ կարող ենք համարել հայկական տեղանունների իմաստակառուցվածքային ուսումնասիրության հիմնադիր: Ընդ որում՝ գիտնականը գրեթե միշտ վկայակոչումներ էր կատարում Յ. Ֆրիդրիխի, Բ. Հրոզնու, Ա. Սեյսի, Ն. Ադոնցի, Ն. Մառի, Հ. Օրբելու և ոլորտի այլ ճանաչված հայ կամ եվրոպացի գիտնականների աշխատանքներից. այդ հղումներն ու աղբյուրագիտական հիմնավորումները առավել արժեքավոր են դարձնում հայագետի առաջարկած ստուգաբանությունները կամ բառային զուգաբանությունները:

Գ. Ղափանցյանը հնագույն երկրանունների հիմքում, որպես կանոն, ցեղանուններ է վերականգնում՝ ելնելով այն իրողությունից, որ այդ անունները արձանագրություններում հաճախ հանդես են գալիս երկու

³ Տե՛ս **Капанцян Гр.** Историко-лингвистическое значение топонимики Древней Армении, Ер., 1940 և **Խուլնի,** Суффиксы и суффиклируемые элементы в топонимике древней Малой Азии, Ер., 1948:

իմաստի դետերմինատիվներով՝ *երկիր* և *արական սեռ անձ*: Հատկանվանական այս բոլոր վերականգնումների և ստուգաբանությունների նպատակը հայերի ազգածագման և լեզվածագման բացահայտումն էր:

Գիտնականի համոզմամբ, «խմբավորումը և համեմատական քննությունը շատ բանով նպաստում են Պատմական Հայաստանի տեղանքի հնագույն անունների ծագումնաբանության հաջող ըմբռնմանը: Իսկ այս հանգամանքը վիթխարի նշանակություն ունի այդ անունների կազմավորման սոցիալ-քաղաքական պայմանավորվածության, ինչպես նաև նրանց գաղափարական, լեզվաբանական և հատկապես էթնո-գենետիկ բնույթի վերհանման համար»⁴:

Հայկական հնագույն տեղանվանացանկը Գ. Ղափանցյանը դիտարկում է որպես պատմական գործոն, իր ձևակերպմամբ՝ հումքային նյութ, աղբյուր Հայաստանի վաղնջական պատմության վերականգնման համար: Հայոց ազգաբանության և հնագույն պատմության փաստերի արժանահավատ վերականգնումը Գ. Ղափանցյանի գերնպատակն էր. «Տեղանվանագիտությունը, ինչպես նաև լեզուն ընդհանրապես պետք է ծառայեն այս պատմական նպատակին՝ երբեմն բացահայտելով այն փաստերը, որոնք տրված չեն գրավոր հուշարձաններում»⁵: Այսինքն տեղանունները, լայն առումով նաև բոլոր հատուկ անունները, հատկապես ցեղանունները լեզուների նախագրային կամ հին շրջանի բառապաշարի վերականգնման կարևորագույն աղբյուր են: Գ. Ղափանցյանը որպես հայերենի վաղնջական շրջանի ցուցիչներ դիտարկում է իր եզրույթով «խալդյան», իմա՝ ուրարտական արձանագրություններում վկայված հատկանվանաշերտը: Իբրև հնագույն շրջանի հայկական տեղանունների առաջացման հիմնաբաղադրիչներ՝ նա առանձնացնում է նախ ցեղ նշանակող եզրույթները, որոնցից կազմված տեղանունների ամբողջությունը կոչում է ցեղային: Ցեղանունների տեղանվանացման գործընթացը համընդհանուր էր և արտահայտված է բոլոր լեզուների տեղանվանացանկերում, որովհետև տարածքի հիմնական բնակիչ տոհմերը և ցեղերը, որպես կանոն, իրենց անվամբ էին ամրագրում պատկան հողերն ու բնակավայրերը, զուգահեռաբար ցեղի անունն ինքնին կամ հատուկ ածանցներով գործառում էր որպես արական անձնանուն, ապա ցեղի հիմնադիրն աստվածացվում էր, մտնում դիցարան, աստվածացումից հետո նրա անունով երկնային ու երկրային բազմաթիվ օբյեկտներ էին անվանակոչվում:

Գ. Ղափանցյանը «Историко-лингвистическое значение топонимики Древней Армении» աշխատության մեջ հայոց հնագույն գավառանունների և նրանց իշխանների տոհմանունների մեջ փորձում է գտնել ուրարտական և խեթական արձանագրություններում հիշատակված երկրանունների ու ցեղերի հետքերը՝ հնչյունական տարբեր օրինաչափություն-

⁴ Капанцян Гр. Историко-лингвистическое значение топонимики Древней Армении, էջ 3:

⁵ Նույն տեղում:

ների հաստատմամբ: Ն. Ադոնցը նման աշխատանք արդեն կատարել էր հունա-հռոմեական, իրանական պատմական աղբյուրների և հայ մատենագրության մեջ հիշատակված փաստերի համադրման ճանապարհով⁶:

Խթաագիտության և ուրարտագիտության իր ժամանակի նվաճումների ու բացահայտումների հիման վրա Գ. Ղափանցյանը հայերենի կազմավորումը տեղափոխում է պատմության վաղնջական շրջան՝ Քրիստոսի ծննդից հազարամյակներ առաջ: Բնորոշ է, որ հայագետն իր վերականգնումները կատարելիս հաճախակի մեջբերում է Ն. Ադոնցի մտքերը, այսինքն՝ վաղնջական ուրարտական և խեթական աղբյուրների տվյալները հաջողությամբ փոխարացնում է հունա-հռոմեական և հայկական սկզբնաղբյուրների պնդումներով՝ կազմելով հնդեվրոպական, կովկասյան և սեմական տարբեր ցեղերի գաղթ-տեղաշարժերի քարտեզը Հայկական բարձրավանդակում՝ միաժամանակ ցույց տալով հայ ժողովրդի մեջ ձուլված մեծ ու փոքր ժողովուրդների էթնիկական պատկերը, որն ամենից առաջ ամրակայվել է Պատմական Հայաստանի աշխարհների ու գավառների և նրանց իշխանական տոհմերի անվանումների մեջ:

«Историко-лингвистическое значение топонимики Древней Арменнии» աշխատության մեջ Գ. Ղափանցյանը ստուգաբանում է 18 երկրանուն, որոնց հիմքում ցեղանուններ են ընկած, և շուրջ երկու տասնյակ բնականուն, որոնց հիմքում պաշտամունքային, շինարարական և աշխարհագրական եզրույթներ են, զուգահեռաբար առանձնացնում է այն տեղանվանակերտ ձևայինները, որոնց միջոցով առավել հաճախ են կազմվել բնականունները: Մենք ընտրողաբար կանդրադառնանք խոշոր և միջին այն բնականունների ղափանցյանական ստուգաբանություններին, որոնք առ այսօր կիրառական են հայերենի տեղանվանացանկերում, և նախարարական հայտնի տոհմերի անունների մեկնություններին:

Գ. Ղափանցյանը նախ անդրադառնում է *Մբեդյան* տոհմանուն-տեղանվանը: Արգիշտի I-ի Խոռխոռոյան արձանագրության մեջ հիշատակված է *Abilianiexi* երկրանունը, որը հանդիպում է և «երկիր», և «արական անձնանուն» դետերմինատիվներով, հետևաբար այն ցեղանվան բովանդակություն ունի: *Abilianiexi* երկրանունը բառանջատման ենթարկելով՝ լեզվաբանը ցույց է տալիս, որ *niexi* բաղադրիչը ստացական ածականների կազմիչ է՝ համարժեք հայկական *-ային* կամ *-ական* ածանցների: Իսկ *Abilian* արմատը պահպանվել է հայկական *Մբեդեան* հատուկ անվան մեջ, այս տոհմին պատկանող կալվածքների տեղի հիման վրա էլ հնարավոր է վերականգնել *Abilianiexi* երկրանվան տարածքը, որը Հավնունիի հետ գտնվել է Արաքսի աջ ափին՝ ներկայիս Կաղզվանի մոտ: Գիտնականը հերքում է այն պնդումը, թե *Abilianiexi*-ն Արա-

⁶ Տե՛ս նաև **Նիկողայոս Ադոնց**, Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, Եր., 1987, **նույնի**, Հայաստանի պատմություն, Քննական պատմություն Հայոց, Երկեր, հ. Դ., Եր., 2009:

գած լեռան մոտ է: Հայոց Աշխարհացույցում *Արեղեանը* Այրարատ աշխարհի 16 գավառներից է, ուստի ուրարտական նրա համարժեք նախաձևը Արաքսի ափին գտնվող երկրի անվանումն է: Ելնելով այն հանգամանքից, որ ուրարտական *Արեղեան*-ը նաև հանդես է գալիս անձի դետերմինատիվի հետ՝ Գ. Ղափանցյանն ընդգծում է, որ այն անձնանուն դարձած ցեղանուն է, արմատը *abil*, իսկ *iani* – ձևույթը հանդիպում է ինչպես ուրարտական, հայկական, այնպես էլ վրացական նախարարական անվանումներում՝ հոգնակի սեռականի իմաստ արտահայտելով:

Հաջորդը Արգիշտի I-ի արձանագրության մեջ հիշատակված *Eriaxi* երկրանունն է, որը գտնվել է ներկայիս Գյումրիի մերձակայքում՝ Էթիունի աշխարհի կազմում, և նվաճվել է Արգիշտիի կողմից: Այս անվանումը ևս հանդիպում է երկու դետերմինատիվների հետ՝ երկիր նշանակող և անձ: Իբրև *Eriaxi*-ի հնարավոր զուգաբանություն՝ Գ. Ղափանցյանն առանձնացնում է *Երևան* տեղանունը, քանի որ, նրա համոզմամբ, *-xi* ածանցը համարժեք է *-ni* ածանցին, ուստի *eria* բուն արմատին, որը ցեղանուն է, երկուսն էլ կարող են կցվել՝ *Eriaxi>Eriani*, այս անցումների միջոցով էլ հնարավոր է վերականգնել *Երևան* տեղանվան նախաձևը: Գ. Ղափանցյանի այս հնարավոր վերականգնման մասին խոսել են նաև Ժ. Սանդալյանը և Ն. Նիկոլսկին, թեև պետք է նշել, որ ստուգաբանական այս վարկածի դեպքում տեղագրության հակասություն է ծագում՝ անունը Շիրակից Արարատյան դաշտավայր է տեղափոխվել, բայց դա էլ կարելի է բացատրել անվանակիր ցեղի գաղթ-տեղաշարժով: Ինչ վերաբերում է բուն արմատին՝ *eri*, ապա հայագետը կարծում է, որ այն նույն *Ari>արի*-ն է, *e>a* անցումը այս շրջանում տարածված էր ուրարտական *ebani>* հայերեն *aban>* աւան, կամ ուրարտական *Erimena> Ar(a)mina, Erasx>Araks* և այլն: Տեղանուն-ցեղանվան արիական բնույթից բխեցվում է Շիրակի նախարարական Կամսարական տոհմի իրանական հնարավոր ծագումը, որի մասին հիշատակություններ կան Մ. Խորենացու պատմության մեջ: Սակայն մենք կարծում ենք, որ այս *Ari>արի*-ն կարող էր վկայել ցեղի ընդհանուր հնդեվրոպական ծագման և ոչ թե իրանական բնույթի մասին, հետևաբար առավել հավանական է Կամսարականների հայկական ծագումը:

Velikuni//Velikuxi ուրարտական երկրանունը տեղակայվում է արդի Գավառի տարածքում, այն քանիցս հիշատակվում է Սարդուրի II-ի, Ռուսա I-ի արձանագրություններում, տվյալ երկրանվան համար հայկական պահպանված զուգաձևություն է *Գեղարքունիքը*՝ *v>q* օրինաչափ անցումով: Այս հատուկ անվան հիմքում ընկած *Vel* արմատը Ղափանցյանը համարում է ցեղանուն, որին կցվել է *-ik* ածանցը. վերջինս ազգություն կրող է նշանակում, ցեղի անդամ, ինչպես *պարսիկ>պարս* ցեղի անդամ, *Հայկ>Հայիկ>հայ* ցեղի անդամ: Մեր կողմից հավելենք՝ *տաճիկ, ռուզիկ, խուժիկ* ձևերը, որոնք վկայված են հայոց հին մատենագրության մեջ իբրև ազգերի ներկայացուցիչների անվանումներ: *Vel*

արմատի իմաստը գիտնականը վերականգնում է ուրարտերենի միջոցով. *veli* նշանակել է «ագգ, ժողովուրդ» կամ «գունդ, ջոկատ»: Լեզվաբանորեն ապացուցված է, որ ժողովուրդների ինքնանվանումները հաճախ իրոք ստուգաբանորեն ծագում են *մարդիկ, ժողովուրդ* նշանակող տարբեր արմատներից:

Ուրարտական արձանագրություններում նշված *Diau(e)xi* երկրանունը՝ ասորեստանյան տարբերակով *Dayaēni*, որը տեղակայվում է Արածանի գետի հովտում, դարձյալ համարվում է ցեղանուն-տեղանուն, ցեղի բուն անունը՝ *diau*. այն պահպանվել է հայոց *Suy-p* > *Suy*-ոց անվանման մեջ, ձայնեղ *η*-ն հայերենում դարձել է խուլ *u*: Այս ցեղանվան հնարավոր հետքերը գիտնականին տանում են դեպի Մամիկոնյանց նախարարական հայտնի տոհմի արմատները. «Տեսականորեն մենք հարցադրում ենք առաջ քաշում. դիաուիդների ցեղի իշխանական դերը չի՞ պահպանվել հայոց Տարոնի (սկզբնապես հավանաբար նրա արևմտյան մասի) և Տայքի ուշ շրջանի նախարարների մեջ, հատկապես Մամիկոնյանների՝ իբրև այս հնագույն և հզոր իշխանական *diao* ցեղի հնարավոր ժառանգորդների: Հայոց Մամիկոնյանները տիրել են հենց այս երկու եզերային աշխարհներին»⁷: Մամիկոնյանների ծագման խնդիրը շատ հայագետների է մտահոգել: Խորենացին խոսում է նրանց *Ճենական* ծագման մասին, ուստի խնդիրը հանգում է *Ճեն* արմատի մեկնաբանությանը: Լ. Հովհաննիսյանը լեզվաբանորեն հիմնավորում է պատմաբան Հ. Սվազյանի բացատրությունը, ըստ որի՝ Ճենաց երկիրը գտնվել է Ամու-Դարյա գետի ափերին, և Ճեներն էլ իրանական ծագման ժողովուրդ էին. «Ճեները, ամենայն հավանականությամբ, պարթևներին ցեղակից ժողովուրդ էին՝ հայերի հետ հեռավոր ծագումնաբանական կապով»⁸: Սակայն Գ. Ղափանցյանը բացահայտել է այս իշխանական տոհմի առավել վաղնջական և հայկական ծագումը՝ կապելով նրանց Արգիշտի I-ի և Մենուայի արձանագրություններում նշված *ηիաու>տաու* ցեղի հետ: Այս տեսակետը հիմնավորվում է նաև Ն. Ադոնցի վերլուծություններով, վերջինս նշում էր, թե Քսենոփոնի ժամանակներում արդեն *diau - տայոց* ցեղը հայացել էր⁹:

Tsupa երկրանունը, որը վկայված է ուրարտական Մենուա արքայի արձանագրություններում, վերականգնվում է հայոց *Օոփ*-ք անվանման մեջ՝ *Օոփաց* թեք ձևով: Գ. Ղափանցյանն այն ծագումնաբանորեն համարում է իտեթական՝ նշելով, որ իտեթերը իրենց թագավորության քայքայումից հետո մեծավ մասամբ հայկականացել են¹⁰: Հայոց Արծրունիների ավատական տոհմը, ըստ հայագետի, կարող է ծագած լինել

⁷ Գ. Ա. Ղափանցյան, Հայոց լեզվի պատմություն. Հին շրջան, էջ 32:

⁸ Լ. Հովհաննիսյան, Բառերի մեկնությունները հինգերորդ դարի հայ մատենագրության մեջ, Եր., 2016, էջ 106:

⁹ Հմմտ. Ն. Ադոնց, Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, էջ 447:

¹⁰ Տե՛ս Գ. Ա. Ղափանցյան, Հայոց լեզվի պատմություն. Հին շրջան, էջ 39-40:

Շոփաց արքաների ժառանգներից, իսկ Շոփաց հայ արքաներն էլ իրենց ծագումով իւթական Տահու հարստությունից էին, Մելիտենե քաղաքից, այստեղից էլ Փավստոս Բուզանդի պատմության մեջ և այլ աղբյուրներում հիշատակված *Շոփ Շահունուց* անվանումը:

Tariuni երկրանունը որպես նվաճյալ տարածք է վկայված Արգիշտի I-ի արձանագրություններում, այն սահմանակից էր *Diau(e)xi* /Տայքին, այս անունը հայերենում պահպանվել է հայոց *Տարսն* տեղանվան մեջ:

Գ. Ղափանցյանն ապացուցում է, որ հասարակության տոհմացեղային կարգը պայմանավորում էր տեղանունների տոհմացեղային բնույթը, ընդ որում՝ առաջնայինն այն տոհմերը և ցեղերն էին, որոնք գալիս և բնակվում էին տվյալ տարածքում՝ դառնալով տեղանքի բնականունների ստեղծողները: Անվանադրման նման սկզբունքը հիմնականում վերաբերում է խոշոր բնականուններին՝ երկրանուններին կամ գավառանուններին, որոնք բոլոր ազգերի մոտ անվանակոչվել են իրենց բնիկ տերերի անունների և համապատասխան ածանցներից կազմված բառաձևերի միջոցով: Էթնիկ եզրույթները վերածվում էին աշխարհագրական եզրույթների¹¹: Գիտնականն իր առջև խնդիր է դնում առանձնացնել հայերենի բառապաշարի այն միավորները, որոնք հնագույն շրջանում, արդի եզրաբանությամբ՝ վաղնջահայերենում, առավել հաճախ էին կիրառվում *տոհմ* կամ *ցեղ* հասկացությունն արտահայտելու համար: Որպես այդպիսին՝ նա կարևորում է *բեր* արմատը, որը, գիտնականի համոզմամբ, կարող էր բովանդակային տարբեր արտահայտություններ ունենալ, նախ՝ *տուն*, ապա՝ *ցեղ* և *մարդիկ*, այնուհետև *բնակատեղի* իմաստներով: Այս *բեր* արմատի գուգաբանությունները Գ. Ղափանցյանը գտնում է իւթերենում՝ *bir* տարբերակով, և կովկասյան լեզուներում, մասնավորապես՝ վրացերենում՝ թե՛ տեղանունների մեջ, թե՛ ազգանունների, օրինակ՝ *Կախաբեր*, *Բերի*, *Չվիբերի*, *Գոգոբերիձե*, *Բերիա*, *Բերիձե*, *Բերիտաշվիլի* և այլն: Հայոց հատկանվանացանկում նա առանձնացնում է *բեր-բերունի* (*ունի*-ն հոգնակերտ է՝ բերունի>ցեղեր) հիմքերով հետևյալ կազմությունները՝ *Տալբեր* իշխանությունը, *Քաջբերունիների* իշխանությունը, *Տարուբերանը*, վերջինս ունի նաև *Տուրուբերան* հնչատարբերակը: *Բերան* բառը դիտարկվում է որպես *բեր* արմատի և *ան* հոգնակերտի միացում՝ դարձյալ ցեղեր իմաստով: Նույն շարքում է *Առբերան* նահանգը, *Ողջաբերը*, *Այլաբերը*:

Շիրակ անվանումը Գ. Ղափանցյանը միանշանակ համարում է տոհմային կամ ցեղային ծագման եզրույթ՝ հիշելով Մ. Խորենացու վկայակոչումները, ըստ որոնց՝ Հայկի ժառանգ Արամայիսի որդի Շարայի անունից է ծագել Շիրակ տեղանունը, այսինքն՝ հայերի համար Շարան դյուցազնանուն է, իսկ դյուցազնանունները, որպես կանոն, ցեղանուններից էին սերում: Ինչ վերաբերում է *շարա* ցեղի ծագմանը, ապա այն

¹¹ Հմմտ. նույն տեղում, էջ 53-57:

ուրարտական արձանագրություններում վկայված չէ, ուստի նրանց հետքերը գիտնականը փորձում է գտնել լեռնային ցեղերի մեջ: Նա նշում է հյուսիսից Հայաստան ներթափանցած լեռնային այն ցեղերին, որոնք հայ մատենագրության մեջ վկայված են որպես ասպատակողներ՝ *հոնք, դեկք, ճիղքք, բաղասիճք, գարգարք* և այլք: *Շարա* ցեղը, ինչպես և *դեկք* (այսինքն՝ լեզգիները) կարող էին կովկասյան ծագման լիներ: Այս ցեղանվան հետքերը Ղափանցյանը վերականգնում է ոչ միան *Շիրակ*, այլև *Շարուր* և *Աշարունիք/Արշարունիք* տեղանունների մեջ: *Աշարունիք*-ը համարվում է նախաձև, որին ավելի ուշ *արշ* բուն ունեցող հատկանունների համաբանությամբ կցվել է *-ր* ձայնորդը. *Արշակ, Արշամ, Արշալիր>Արշամունիք. Աշարունիք* տեղանվան մեջ *ա-*ն հայազետը համարում է նախահավելված¹²:

Էթնիկական ծագման հաջորդ արմատ *Gog*-ն է, որից ունենք *Գուգարք* և *Կոգովիտ* հայտնի տեղանունները: Հայազետը աստվածաշնչյան հետք է գտնում այս ցեղի համար. «Կարծում ենք, որ էթնիկական *gog* եզրը աշխարհագրական *Gog-ar//Gug-ar, Gog-ovit*, գուցե նաև *Kok-arič* ձևերում *qoq* ժողովրդի անվանումն է («Գոգ և Մագոգ»), որոնց մասին խոսվում է Աստվածաշնչում»¹³: Նշենք, որ Աստվածաշնչյան հանրագիտարանում այս *Գոգ* և *Մագոգ* հատուկ անունները մեկնաբանվում են որպես հեթանոս ժողովուրդների և երկրների անուններ, թեև նշվում է, որ դրանք նաև անձնանվանական կիրառություն ունեն¹⁴:

Bala//Pala ժողովուրդը հայտնի է դարձել խեթական ծիսական գրություններից, Գ. Ղափանցյանն առաջարկում է այս ցեղի վերջին դոմեններից համարել հայոց Բալահովիտը, որին հարևանակից էր Պաղնատունը: Հետևելով Ն. Ադոնցին՝ նա ենթադրում է, որ կիմերների արշավանքների պատճառով այս *բալա* ցեղը տեղաշարժվել է դեպի ներկայիս Զանգեզուր. Կապանի շրջակայքն ըստ այդմ կոչվում էր *Բաղք՝ Բաղաց աշխարհ, երկիր, տուն*: Ստեփանոս Օրբելյանը, հիշատակելով այս վայրերը, *բաղ* արմատը բխեցնում է *Բաղակ* անունից, որից կազմված են *Բաղակի քար, Բաղակու ամրոց* տեղանունները: Գ. Ղափանցյանը նշում է, որ *Բաղակ* անունը կազմված է *բաղ* ցեղանունից և *-ակ* ածանցից, որն արտահայտում է տվյալ էթնիկական միավորին անձի պատկանելության իմաստ՝ *Միսակ, Մանդակ, Մալակ, Արմենակ*, ինչպես և վերը նշված *-իկ* ածանցը, որից ունենք *Հայկ* դյուցազնանուն-անձնանունը: Ինչպես համոզիչ նշում է Գ. Ղափանցյանը, *Հայկ* նշանակում է հայերից ծագող, *Արմենակն* էլ՝ արմեններից սերող, արմենական¹⁵: Իսկ *բաղ* ցեղի անունը կարող է ամրակայված լինել նաև *Ղարաբաղ* տեղանվան մեջ: Ն. Ադոնցը *բաղ* արմատը համադրում էր *բաղասաճիք* լեռնական ցեղի անվանման

¹² Տե՛ս նշվ. աշխ., էջ 61-62:

¹³ Նշվ. աշխ., էջ 63:

¹⁴ Հմմտ. «Библейская энциклопедия», М., 1990, էջ 164-165:

¹⁵ Տե՛ս Գ. Ա. Ղափանցյան, Հայոց լեզվի պատմություն. Հին շրջան, էջ 22 և 67:

հետ, որը վկայված է Փավստոս Բուզանդի Պատմության մեջ: *Բաղասականի բաղասաճիք* ցեղերը բնակեցնում էին Ադվանքը:

Վայոց ձոր երկրանունը բնորոշվում է որպես *վայ* ցեղերի անվանումից ծագած միավոր և զուգադրվում է *Հայոց ձոր* նույն կառույցն ունեցող տեղանվան հետ:

Ամփոփելով ցեղանուններից ծագած տեղանունների քննությունը՝ Գ. Ղափանցյանն ուրվագծում է այն տոհմերն ու ցեղերը, որոնք մասնակցել են հայոց ազգի կազմավորմանը, որոնք ծագումով հնդեվրոպական էին, սեմական և կովկասյան: Տոհմերի և ժողովուրդների հայկականացման գործընթացը, Գ. Ղափանցյանի համոզմամբ, սկսվել է Փոքր Հայքից՝ Արածանիի հովտից, որտեղ Հայասան էր, ապա ընդգրկել Տարոնը, Վանը և Այրարատը: «Բազմաթիվ նախահայկական և հայկական ցեղեր և տոհմեր կամ անհետ վերացան, կամ կտակեցին իրենց անունները հարազատ աշխարհագրական նահանգներին և բնակավայրերին ու ավատական, իշխանական տներին»¹⁶, - եզրափակում է հայագետը:

Տեղանունների կազմության հնագույն սկզբունքների հետազոտության ընթացքում Գ. Ղափանցյանը, բացի տոհմացեղային եզրույթներից՝ առանձնացնում է պաշտամունքային բառաշերտը, որի մեջ ընդգրկված էին՝ ա) դիցանունները՝ *Արա, Խալդի, Տիր, Անահիտ*, բ) պաշտամունքային վայրերի անվանումները կամ շինարարական եզրույթները՝ որպես գործուն տեղանվանակազմիչներ, ինչպես օրինակ՝ *վանք, հայի* (ուրարտերեն *qnh*), *ազարակ, անգղ* (Գ. Ղափանցյանի կարծիքով, այս բառն ունի ակկադական ծագում՝ *ամուր բերդ* նշանակությամբ), *աշտարակ, ավան, բերդ*: Փաստենք, որ այս վերջին խմբի տեղանվանակազմիչներն այսօր էլ կիրառական են նոր անվանումներ կազմելիս:

Գ. Ղափանցյանի՝ որպես հատկանվանագետի հետաքրքրությունների կենտրոնում տեղանունների հետ մեկտեղ եղել են նաև դիցանունները, որոնց ուսումնասիրությունը նա կառուցում էր պատմալեզվաբանական և ծագումնաբանական հայեցակետերի հիման վրա: Մեր դիցարանից իր հնությամբ և ազգածագման հետ ունեցած սերտ կապով գիտնականին հատկապես հետաքրքրել է *Արա* աստվածը, որի վերաբերյալ նա ունի մի շարք աշխատություններ, դրանք ամբողջացան «Անտիպ գործեր» գրքում ընդգրկված «Արա Прекрасный. Мифотворческий образ у армян» ուսումնասիրության մեջ: Հայոց Արա աստվածը միշտ բնորոշվել է որպես արևային աստվածություն, որն իր նախատիպերն է ունեցել վաղնջական փոքրասիական դիցարաններում: Ընդ որում՝ նախատիպերի որոնումը սկսվում է անունների հնչյունական ընդհանրության բացահայտումից, այնուհետև հաստատվում է բովանդակային և գործառական մերձակցությունը:

Գ. Ղափանցյանը ծագումնաբանական և լեզվական ընդհանրություն է բացահայտում հայոց Արա Գեղեցիկի և խեթական A-a-ra-aճ

¹⁶ Գր. Капанця, Историко-лингвистическое значение топонимики Древней Армении, էջ 75:

աստվածության, ուրարտական Ar'a-ի, բաբելոնական հանդերձյալ աշխարհի անվանման միջև, որ կոչվում էր Arallu, բաբելոնական առասպելաբանության մեջ կա նաև նույնանուն լեռ, որի վրա կանգնած է մեր աշխարհը, իսկ հետագա շրջանում՝ սլավոնական Яр (Ярило) և վրացական Aralo աստվածների, աստվածությունների այս շղթայի եզրափակող օղակը Հիսուս Քրիստոսն է, որի կերպարը խորհրդանշում է խոր անցյալից եկող հավերժական հավատալիքները մահվան հանդեպ կյանքի հաղթանակի մասին: Արան համադրական աստվածություն էր, որն իր մեջ խտացնում էր մահվան և հարության գաղափարները, այսինքն՝ բնության հավերժակայությունը՝ մահ, ապա՝ հարություն, ձմեռվախճան և զարթոնք-գարուն կամ արևամուտ-գիշեր և արևածագ-ցերեկ: Այս հայկական աստվածության մասին հիշատակություններ կան ոչ միայն հայ մատենագրության մեջ՝ Մ. Խորենացի, Բուզանդ, Անանուն, այլև հին հունական աղբյուրներում, մասնավորապես Պլատոնի մոտ¹⁷: Գիտնականը մանրամասն դիտարկում է առկա բոլոր սկզբնաղբյուրները՝ վեր հանելով Արայի և Հայկի պաշտամունքի անքակտելիությունը: Արա դիցանունից բազմաթիվ հայկական տեղանուններ են կազմվել, ինչպես օրինակ՝ *Արագած* լեռնանունը, որը ստուգաբանորեն նշանակում է *Արայի գահ*: Ստեղծվել են անձնանուններ, տոհմանուններ. Արան և Հայկը, գիտնականի համոզմամբ, մեր ազգային գոյության հիմքերն են, ուստի երկուսն էլ ունեն իրենց համարժեքները երկնակամարում՝ Արան՝ իր աստղը, իսկ Հայկը՝ Օրիոնի համաստեղությունը: Ուսումնասիրության վերջում Գ. Ղափանցյանը գեղարվեստական ընդհանրացում է կատարում. «Նրանք երկուսով (Արան և Հայկը-Ն. Դ.), ըստ իս, արտացոլում են հայ ժողովրդի գոյության պատմական խորհուրդը: Մի դեպքում առաջ է մղվում պահապան աստծո և հայերի կազմավորողի նախակերպարը, առավել ճշգրիտ՝ գաղափարականացումն ու աստվածացումն այն ժողովրդի, որը ձևավորվել է դեռևս պատմության արշալույսին Հայասա արքայությունում Եփրատի վերին հովտում: Իսկ մյուս դեպքում այս հայ-արմինների դիցարանը զլխավորում է կենսական գործընթացի խորհրդանիշը՝ Արան: Անհամար փորձությունների ընթացքում հայերը չեն հրաժարվել և չեն հրաժարվի իրենց կեցության այս երկու խորհրդանիշերից՝ Հայկից՝ որպես հայ ցեղի գաղափարից, ինչպես որ առ այսօր էլ իրենց անվանում են հայերը, և Արայից, որը հավերժական վերածննդի և կյանքի համար պայքարի խորհրդանիշն է»¹⁸:

Բանալի բառեր – Գր. Ղափանցյան, *հատկանվանագիտություն, տեղանվանագիտություն, անձնավանագիտություն, ցեղանուններ, հայոց նախահայրենիք, հնդեվրոպական, կովկասյան, սեմական լեզուներ, արմեն, հայ*

¹⁷ Տե՛ս Գ. Ղափանցյան, Անտիպ գործեր // Արա Прекрасный. Мифотворческий образ у армян, էջ 4-14:

¹⁸ Նույն տեղում, էջ 140-141:

НАРИНЕ ДИЛБАРЯН – Ономастические исследования Григора Капанцяна. – Г. Капанцяна один из крупнейших армянских лингвистов первой половины XX века, теории которого поныне не потеряли своего значения. Ономастические труды Капанцяна в основном посвящены древнейшим топонимам Армянского нагорья и Малой Азии, он раскрыл этимологию этнонимов *Армен* и *Хай*. В 1940 г. на русском языке появилась его работа «Историко-лингвистическое значение топонимики древней Армении», в 1948-м – «Суффиксы и суффилируемые элементы в топонимике древней Малой Азии». В древнейших топонимах Капанцяна реконструировал родовые имена, этнонимы племён, которые участвовали в формировании армянского народа, установил связь армянского с древними индоевропейскими, кавказскими и семитскими языками.

Ключевые слова: *ономастика, топонимика, антропонимика, родовые имена, прародина армян, индоевропейские, кавказские и семитские языки, армен, хай*

NARINE DILBARYAN – Grigor Ghapantsyan's Onomastic Studies. – Grigor Ghapantsyan is one of the greatest Armenian linguists of the beginning and middle of the 20th century, whose theories and opinions are relevant and actual until nowadays. He is one of the most quoted scientist-Armenologists whose works are very well-known abroad. G. Ghapantsyan's range of scientific interests was rather wide. He carried out a lot of toponymic studies in which he explored not only the place names but also the anthroponyms, theonyms, patrimonial names. In general, the great scientist analyzed the toponymy of Armenian Highland and Asia Minor. He discovered the etymology of the ethnonyms "Armen" and "Hay". G. Ghapantsyan reconstructed the patrimonial names in the ancient toponyms, ethnonyms of those tribes which participated in the formation of the Armenian people, and on the basis of these tribes and their settlements, he restored the ancient homeland of Armenians, the relations of the Armenian language with the ancient Indo-European, Caucasian and Semitic languages. Ghapantsyan's most famous onomastic works are "Historical-Linguistic Significance of the Toponymy of Ancient Armenia" (1940), "Suffixes and Suffixal Elements in the Toponymy of Ancient Asia Minor" (1948). Later, his onomastic and philological studies were collected and published in the two-volume "Historical-Linguistic Works" (volume I – 1956, volume II – 1975).

Key words: *G. Ghapantsyan, onomastics, toponymy, anthroponymy, patrimonial names, ethnonyms, Armenian ancient homeland, Indo-European, Caucasian and Semitic languages, Armen, Hai*